ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 06.05.2015թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-10/15 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-10/15 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի 2015 թվականի ապրիլի 28-ին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից 28.04.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:
2. Կասեցնել «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Էյվիսի Քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ԳԲԽ-10/15 բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Հրաչյա Ավետիսյան**

Էդվարդ Գրիգորյան